ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/13 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

Ք. Երևան « 26 » ապրիլ 2024թ.
ժամը՝ 10:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի «22» փետրվարի 2024թ. թիվ 304-Ա հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի կառուցման», ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» և ՀՀ Կոտայքի մարզի «Գողթ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/13 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Ֆելիքս Սարգսյան՝ Հանձնաժողովի նախագահ
Նարեկ Մարգարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ/բացակա անդամ/
Արաքսյա Իսախանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 Հայտերը բացվել են **2024 թվականի ապրիլի 26-ին, ժամը 10:00-ին** էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 , 4-րդ հարկ, 409 սենյակ հասցեում:

2. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները*

2.1 Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

ՀՀ	Մասնակիցների անվանումները	Հասցե, էլեկտրոնային փոստ,	հեռախոս
1	«Իրտիգ» ՍՊԸ և «Ալտերնատիվ» ՍՊԸ կոնսորցիում	Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի փ. , շ 40 բն. 28 irtig@inbox.ru	099 89 89 87
		ՀՀ Լոռու մարզ, Մանուշյան փ. 1/5	096 42 43 23
2	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ	Ք. Երևան, Թումանյան 32/4 armshin_ltd@mail.ru	012 50 88 00
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Ք. Երևան,Կոմիտաս 54բ. ,ekspertizaproektov@mail.ru	093 80 00 09

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից հայտերը (ծրարները) կազմվել և ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգով, և հրավերով սահմանված կարգով:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

4.1 Հանձնաժողովը փաստում է, որ հայտերը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա են հետագա գնահատման:

4.2 Հանձնաժողովը որոշեց ՀՏՀՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/13 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

5. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման Առարկան	Նախահաշվային պլանավորված Գինը	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	«Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	60,532,000	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ	49 950 000 /քառասունինը միլիոն ինը հարյուր հիսուն հազար/	9 990 000 /ինը միլիոն ինը հարյուր իննսուն հազար	59 940 000 /Հիսունինը միլիոն ինը հարյուր քառասուն հազր/	Առկա է
			«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	50 250 000 /հիսուն միլիոն երկու հարյուր հիսուն հազար/	10 050 000 /տաս միլիոն հիսուն հազար/	60 300 000 /վաթսուն միլիոն երեք հարյուր հազար	Առկա է
2	«Վանանդ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	44,526,000					

3	«Գողթ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	44,526,000	«Իրտիգ» ՍՊԸ և «Ալտերնատիվ» ՍՊԸ կոնսորցիում	37 105 000 /երեսունյոթ միլիոն մեկ հարյուր հինգ հազար/	7 421 000 /յոթ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար/	44 526 000 /քառասունչորս միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար/	Առկա է

5.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը / հայտերով ներկայացրած գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

6.Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

6.1 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված հայտի ապահովումները Մասնակիցների կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովումների իսկությունը:

7.Հանձնաժողովը որոշեց.

7.1 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.1-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկերին՝ պարզելու Մասնակիցների բանկային երաշխիքների իսկությունը:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7-րդ բաժնի 7.1-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի նիստը

նախագահող՝

Ֆելիքս Սարգսյան _____

անդամներ՝

Նարեկ Մարգարյան _____

Արաքսյա Իսախանյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Լուսինե Ղազարյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Ռոզա Ասատրյան _____